



215. ԱՎԵՏԱՐԱՆՆ ՈՒ ՄԱՐԴԸ

Մի մարդ իրենց գյուղի տերտերին շատ անպատվելիս կլինի,
քյոխվան ինչ կանի, ինչ չի անի, էս մարդը վերջ չի տա իր արարք-
ներին, կշարումակի պարսավել տերտերին։ Մի օր քյոխվան եկե-
ղեցու բակում, հասարակության առաջ կսպառնա այդ մարդուն և
կստիպի, որ սա ավետարանի վրա երգում ուտի ծրբ ավետարանը
կտան այդ մարդուն, սա ամենայն զերմեռանդությամբ ավետարա-
նը համբուրելով կերդվի, որ այլևս տերհողը չի անպատվի։

Բոլորը երկյուղած ավետարանի վրա երդվելու սարսափից, որ
այն չի կարելի զանց առնել, հավատացած էին, որ էդ մարդը էլ
չի շարումակի իր արարքը, բայց վերջինս հենց որ ավետարանը
հետ կտա, իսկույն կսկսի ավելի ուժեղ և սուր ծաղրով պարսավել
տերտերին։

— Տո տեաքանդ, նոր ավետարանի վրա երդվեցիր, որ էլ
շպարսավես տերտերին, հիմա դարձյալ շարումակում ես, ավետա-
րանը քեզ շարաշար կպատժի, — բարկացած գոշում է քյոխվան։

— Քյոխվա, թո արեց, այդ ավետարանը զորություն չունի, թե
չէ, ամեն օր տեսնում է, որ տերտերը գիշերները հավ ու ճուտ է
գողանում և այցելում այրի կանանց, մի անգամ ինչո՞ւ տերտե-
րին չի պատժում, — պատասխանում է մարդն ու հեռանում։